ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արդարադատության նախարարի տեղակալ Տիգրան Դադունցի՝ Ֆրանսիայի Հանրապետություն (Ստրասբուրգ) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձինք՝ Տիգրան Դադունց

Գործուղված անձի զբաղեցրած պաշտոնը՝ Արդարադատության նախարարի տեղակալ

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ֆրանսիայի Հանրապետություն (Ստրասբուրգ), 2026 թվականի հունիսի 10-12ը ներառյալ

Հրավիրող կողմը՝ ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցի (այսուհետ՝ Հակակոռուպցիոն ցանց) քարտուղարություն

Գործուղման նպատակը՝ մասնակցություն Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) 103-րդ լիագումար նիստին

Քննարկված թեմաները՝ ԳՐԵԿՈ-ի գնահատման հինգերորդ փուլի շրջանակում Հայաստանին ներկայացված հանձնարարականների կատարման վերաբերյալ Հայաստանի համապատասխանության զեկույցի քննարկում և հաստատում

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Գլխավորել եմ 2026 թվականի հունիսի 10-12ը ԳՐԵԿՈ-ի 103-րդ լիագումար նիստին մասնակցած Հայաստանի պատվիրակությունը: ԳՐԵԿՈ-ի 103-րդ լիագումար նիստին, ի թիվս ԳՐԵԿՈ-ի գնահատման վեցերորդ փուլի Լյուքսեմբուրգի, Սլովենիայի և Միացյալ Թագավորության զեկույցների, հաստատվել են նաև Հայաստանի, Վրաստանի, Իռլանդիայի, Իտալիայի, Մոնտենեգրոյի և Սերբիայի՝ գնահատման հինգերորդ փուլի (բարձրագույն գործադիր մարմիններում և իրավապահ մարմիններում կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության խթանման վերաբերյալ) համապատասխանության զեկույցները:

Հանդես եմ եկել բացման խոսքով, այնուհետև ներկայացրել ԳՐԵԿՈ-ի գնահատման հինգերորդ փուլի Հայաստանի գնահատման զեկույցի ընդունումից՝ 2024 թվականի մարտից ի վեր հակակոռուպցիոն ոլորտի բարեփոխումները՝ ուղղված ԳՐԵԿՈ-ի հանձնարարականներին համապատասխանությանը:

Ներկայացրել եմ նաև բարձրագույն գործադիր մարմիններում գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձանց վարքագծի կանոնների, գնումների գործընթացում արարողակարգային ծախսերի թափանցիկության ապահովման, լոբբիստական գործունեության, քաղաքացիական հասարակության մասնակցության խթանման ուղղությամբ իրականացված աշխատանքները: Անդրադարձ է կատարվել նաև վարչապետի, փոխվարչապետների, նախարարների հասարակական հիմունքներով խորհրդականների կարգավիճակի հստակեցմանն ուղղված օրենսդրական փոփոխություններին: Հասարակական հիմունքներով խորհրդականների նկատմամբ այսուհետ տարածվում են «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով բարեվարքության համակարգի տարրերը՝ ներառյալ հայտարարագիր ներկայացնելու պահանջը, ինչի արդյունքում Հայաստանին ներկայացված համապատասխան հանձնարարականը գնահատվել է բավարար կատարված:

ՏԻԳՐԱՆ ԴԱԴՈՒՆՑ

16.06.2026թ.